Հաստատվել է
«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան» հիմնադրամի
գիտական խորհրդի 2026թ. հունիսի 29-ի թիվ 8 նիստում
Գիտական խորհրդի նախագահ
_____ Լիլիթ Մկրտչյան

# ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀՈԲԵԼՅԱՐՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՆ

## ԿԱՐԳ

1. «Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամում (այսուհետ՝ Համալսարան) 20 տարի աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարած գիտամանկավարժական, գիտահետազոտական և վարչական կազմի աշխատակիցների ծննդյան 60, 65, 70, 75, 80, 85, 90, 95, 100-ամյակները լրանալու կապակցությամբ՝ հիմք ընդունելով Համալսարանի կանոնադրության 29 կետի, ներքին կարգապահական կանոնների 1.1., 3.11. կետերը, սահմանվում է դրամական պարգևատրում մեկ ամսվա աշխատավարձի չափով: Ռեկտորատի կողմից հղվում է շնորհավորական ուղերձ:
2. Պրոֆեսորադասախոսական և վարչական կազմի՝ պարգևատրման ենթակա աշխատակցին ներկայացնում է Համալսարանի ֆինանսների պլանավորման և կադրերի հաշվառման վարչությունը՝ համապատասխան ստորաբաժանման ղեկավարի հաստատմամբ:
3. Դրամական պարգևատրման մասին արձակվում է հրաման:
4. Շնորհավորական ուղերձը կազմում է համալսարանի համապատասխան ստորաբաժանումը, ստորագրվում ռեկտորի և ստորաբաժանման ղեկավարի կողմից:
5. Պրոֆեսորադասախոսական կազմի հոբելյարին ուղերձը հանդիսավորությամբ հանձնվում է Համալսարանի գիտական խորհրդի նիստում: